

Մաքսային ընթացակարգեր

ԱՐՏԱՀԱՆՍԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Օրենսդրություն

- Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագիր
- Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենք
- Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին ՀՀ օրենք
- Բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորող առարկաների բուսասանիտարակն հավաստագրերի տրամադրման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 1093-Ն որոշում
- Ապրանքի ծագման հավաստագրի տրամադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 1772-Ն որոշում
- ԵՄ օրենսդրություն (հրահանգներ, կանոնակարգեր)

Արտահանման ընթացակարգ

Տեխնիկական գործընթացներ

- Արտահանման փաստաթղթերի պատրաստում
- Ապրանքի նախապատրաստում արտահանման

Մաքսային ձևակերպումներ

- Բեռնատար, զննում հայտարարագիր, մաքսային վճարումներ և այլն

Սահմանային միջոցառումներ

- Բեռնատարի զննում, կնքում, ստուգումներ, մեկնում

Արտահանման պայմանագիր

- Առևտրային պայմանագիր ԵՄ ներմուծողի հետ
  - Ապրանքի անվանումը և քանակը
  - Ապրանքի նկարագիրը, ներառելով դրա առանձնահատկությունները
  - Վճարման մեթոդը
  - Առաքման պայմանները, հասցեն, ժամկետները
  - Ապրանքների ընդհանուր արժեքը, արտահայտված նաև Եվրոյով
  - Տրանսպորտային միջոցը
  - Կոնտակտային տվյալներ

Հաշիվ ապրանքագիր

- Պետք է պարունակի առնվազն հետևյալ տվյալները
  - Արտահանող և նորմուծող կողմերի անվանումները և փոստային հասցեները
  - Դուրսգրման ամսաթիվը
  - Ապրանքի նկարագիրը (առկայության դեպքում ապրանքային նշանը կամ առևտրային անվանումը)
  - Ապրանքի քանակը և չափման միավորը
  - Ապրանքի միավոր արժեքը և ամբողջ խմբաքանակի արժեքը
  - Հաշիվ ապրանքագրի ամբողջական արժեքը և գործարքի վճարման արժույթը
  - Վճարման պայմանները
  - Առաքման պայմանները և տրանսպորտի տեսակը

Ապրանքի ծագման երկրի հավաստագիր

- Հայաստանն այլևս չի օգտվում GSP համակարգից, հետևաբար ԵՄ համար չպետք է պահանջվի, սակայն . . . .
- Ընդհանուր ձևի հավաստագիր
- Դիմում և համապատասխան փաստաթղթերի ներկայացում՝ ԱԱՊ
  - Դիմում հայտարարագիր
  - Տեղեկանք կամ հայտարարագիր արտադրության մասին
  - Վճարման անդորագիր

Բուսասանիտարական հավաստագիր

- Բուսական արտադրանքի արտահանումն իրականացվում է ներմուծող երկրի պահանջներին համապատասխան
- Հավաստագիրը տրվում է ՍԱՏՄ կողմից, ներկայացված հայտի հիման վրա
  - արտահանող անձի տվյալներ՝ անուն, ազգանուն, բնակության վայր, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը և գտնվելու վայրը.
  - ներմուծող երկրի անվանում.
  - ստացող անձի անուն, ազգանուն և բնակության վայր, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը և գտնվելու վայրը.
  - արտահանվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների անվանումները և քանակությունը.
  - ստացման վայրը

Ապրանքատրանսպորտային բեռնագիր

- Պայմանագիր բեռնափոխադրողի հետ, որի հիման վրա բեռնափոխադրողը տրամադրում է ապրանքատրանսպորտային բեռնագիր
- Ապրանքատրանսպորտային բեռնագրերի տեսակներ
  - Կոնոսամենտ՝ նավաբեռնագիր (Bill of Landing)
  - Բեռնափոխադրման ընկերությունների ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի կոնոսամենտ (FIATA Bill of Landing)
  - Ավտոճանապարհային բեռնագիր (Road Waybill)
  - Օդային բեռնագիր (Air Waybill)
  - Երկաթուղային բեռնագիր (Rail Waybill)
  - Ավտոճանապարհային միջազգային փոխադրման կառնետ (TIR Carnet)
- Բեռի ապրանքների ցանկ

Բեռի ապրանքների ցանկ (Packing list)

- Կոմերցիոն փաստաթուղթ, որը տրամադրում է տվյելներ նկարագրում է արտահանվող ապրանքը, և փաթեթավորման մանրամասներ (քաշ, չափեր և այլն)
- Սովորաբար պարունակում է հետևյալ տվյալները
  - Արտահանողի, ներմուծողի և տրանսպորտային կազմակերպության տվյալներ
  - Թողարկման ամսաթիվ
  - Հաշիվ ապրանքագրի համար
  - Փաթեթավորման տեսակ (արկղ, տուփ և այլն)
  - Փաթեթների քանակը
  - Յուրաքանչյուր փաթեթի նկարագրություն (ապրանքի նկարագիր և մեկ փաթեթում դրանց քանակ)
  - Զուտ քաշ, համախառն քաշ, չափման միավոր

Արտահանմանն առնչվող այլ քայլեր

- Բեռնափոխադրման ապահովագրություն՝ ծածկում է բեռի պահեստավորման, բարձման և փոխադրման ընթացքում առաջացող ռիսկերը
- Բեռի նախապատրաստում (կշռում, փաթեթավորում, պիտակավորում, պահեստավորում)
- Բեռի զննում, բեռնատարի կնքում (տրվում է տեղեկանք մաքսային մարմնի կողմից)
- Մաքսային հայտարարագրի կազմում (որտեղ նշվում է բեռի մաքսային արժեքը և ԱՏԳԱԱ ծածկագրը)
- Բեռի մաքսազերծում, մաքսային վճարների կատարում, արտահանում

Սահմանային միջոցառումներ

- Բեռը տեղափոխվում է սահմանային մաքսակետ, ներկայացվում են համապատասխան փաստաթղթերը
- Բեռնատարը կշռվում է և անցնում զննում
- Հսկողության ենթակա ապրանքի դեպքում անցնում է համապատասխան հսկողություն, տեսուչը կնքում է փաստաթղթերը կամ տրամադրում անհրաժեշտ հավաստագիր
- Բեռքը կնքվում և համարակալվում է, բեռնատարը սկանավորվում և գնում է կայանատեղի
- Վարորդը ստանում է բեռի փաստաթղթերը և անցնում է անձնագրային ստուգում
- Բեռնատարը և վարորդն անցնում են ռադիոակտիվության ստուգում

Մաքսային ընթացակարգերը մինչև ԵՄ մուտք գործելը

- Մուտքի ամփոփ հայտարարագիր (ENS)
  - Մինչև ԵՄ սահման ժամանելը
  - Նախնական տեղեկատվություն բեռը տեղափոխող տրանսպորտային միջոցների մասին
  - Ներմուծողի կամ բեռնափոխադրողի կողմից
  - Արտահանման փաստաթղթեր (հաշիվ-ապրանքագիր, կոնոսամենտ և այլն)
- Ռիսկի գնահատում
  - Նախքան բեռի ժամանումը
  - Անվտանգության և ապահովության նպատակներով
- Ներմուծման մաքսային ռեժիմների սահմանում
  - Տեղափոխում ժամանակավոր պահեստ ոչ ավել քան 90 օր մինչև համապատասխան ռեժիմի նշանակումը (ազատ շրջանառություն, տրանզիտ, վերամշակում և այլն)

ԵՄ մաքսազերծման փաստաթղթեր

- Մաքսային հայտարարագիր
  - Միասնական վարչական փաստաթուղթը (SAD) ներմուծման հայտարարագրման ընդհանուր ձև է ***<u>ԵՄ բոլոր երկրների համար</u>***
  - Կիրառվում է երրորդ երկրների հետ առևտրի դեպքում
- Հաշիվ-ապրանքագիր
- Բեռնափոխադրման փաստաթղթեր (ներառյալ ապահովագրություն)
- Բեռի ապրանքների ցանկ
- Ծագման հավաստագիր
- Այլ լիցենզիաներ կամ փաստաթղթեր

ԵՄ սահմանային միջոցառումներ

- Ապրանքն ուղարկվում է ժամանակավոր մաքսային պահեստ (ոչ ավել քան 90 օր) մինչև մաքսազերծումը
  - Մաքսազերծումը կարող է կատարվել ներկայացված փաստաթղթերի հիման վրա
  - Կարող է պահանջվել փաստաթղթային ստուգում կամ լրացուցիչ փաստաթղթերի ներկայացում
  - Կարող է պահանջվել փաստաթղթային և բեռի ֆիզիկական ստուգում
- Մաքսազերծումից հետո ապրանքը համարվում է ԵՄ ապրանք և կարող է ազատ տեղաշարժվել և վաճառվել ԵՄ անդամ ցանկացած երկրում

Պարտադիր վճարներ

- Մաքսատուրքեր - ադվալորային և ոչ ադվալորային մաքսատուրքեր (հիմնականում գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ)
- Ավելացված արժեքի հարկ
  - ***<u>ստանդարտ դրույքաչափը չի կարող ցածր լինել 15%-ից</u>***
  - երկրները կարող են կիրառել մեկ կամ երկու նվազեցված դրույքաչափ, որոնք սակայն չպետք է ցածր լինեն 5%-ից
  - որոշ ապրանքների և ծառայությունների նկատմամբ նվազեցված դրույքաչափ, որը չպետք է ցածր լինի 12%-ից
  - Որոշ երկրներ կարող են կիրառել նաև 5%-ից ցածր դրույքաչափ (օր. Ֆրանսիա՝ 2. 1%, Իսպանիա և Իտալիա՝ 4%, Լյուքսեմբուրգ՝ 3%)

Պարտադիր վճարներ

- Ակցիզային հարկ
  - Օրենսդրությունը ***<u>ներդաշնակեցված</u>*** է և սահմանում է նվազագույն դրույքաչափերը
  - Կարող է կիրառվել հետաձգման ընթացակարգ
- Ակցիզային հարկ կիրառվում է հետևյալ ապրանքների նկատմամբ
  - Ալկոհոլային խմիչքներ
  - Ծխախոտ, սիգար, սիգարելլա
  - Նավթամթերք (բենզին, հեղուկ գազ, կերոսին և այլն)
  - Էլ. էներգիա և էներգետիկ ապրանքներ (բնական գազ, քարածուխ, էլեկտրականություն)

Տեղեկատվություն ԱԱՀ և ակցիզային հարկերի վերաբերյալ

- ԱԱՀ - https://ec.europa.eu/taxation_customs/system/files/2021-06/vat_rates_en.pdf
- Ակցիզային հարկեր - https://ec.europa.eu/taxation_customs/system/files/2021-09/excise_duties-part_iii_tobacco_en.pdf

INCOTERMS® 2020

Incoterms® 2020

- Միջազգայնորեն ճանաչված 11 կանոններ, որոնք սահմանում են վաճառողների և գնորդների պատասխանատվության շրջանակները
- Բաժանվում է երկու խմբի՝ ըստ տրանսպորտի տեսակի
  - Կանոններ, որոնք վերաբերում են տրանսպորտի բոլոր տեսակներին (7 կանոն)
  - Կանոներ, որոնք տարածվում է միայն ջրային տրանսպորտի նկատմամբ (4 կանոն)

INCOTERMS 2020

Point of Delivery and Transfer of Risk



Incoterms® 2020

- **EXW** - Ex Works (գործարանից կամ պահեստից)
  - Վաճառողը ապրանքը հանձնում է գնորդի տնօրինությանը վաճառողի տարածքում կամ այլ նշված վայրում (գործարան, պահեստ և այլն)
  - Վաճառողը պարտավոր չէ իրականացնել արտահանման մաքսազերծումը կամ տրանսպորտային միջոցի վրա ապրանքի բեռնումը
- **FCA** - Free Carrier (մինչև բեռնափոխադրողի մոտ)
  - Վաճառողը ապրանքը հասցնում է բեռնափոխադրողին կամ Գնորդի կողմից նշված այլ անձին, վաճառողի տարածքում կամ այլ պայմանավորված վայրում
  - Կողմերին խորհուրդ է տրվում հստակ նշել առաքման կոնկրետ վայրը, քանի որ ռիսկերը փոխանցվում են գնորդին միայն այդ վայրում
- **CPT** - Carriage Paid to (Փոխադրումը վճարված է մինչև)
  - Վաճառողը ապրանքները հասցնում է փոխադրողին կամ գնորդի կողմից նշված անձին՝ պայմանավորված վայրում
  - Վաճառողը պարտավոր է վճարել ապրանքի՝ մինչև նշանավայր փոխադրման հետ կապված ծախսերը

Incoterms® 2020

- **CIP** - Carriage and Insurance Paid To (Փոխադրումը և ապահովագրումը վճարած է մինչև)
  - Վաճառողը ապրանքները հասցնում է փոխադրողին կամ գնորդի կողմից նշված անձին՝ պայմանավորված վայրում: Այստեղ ավելանում է միայն ապահովագրությունը
  - Գնորդը պետք է հստակ տեղեկացված լինի, որ վաճառողը կատարում է միայն մինիմալ ապահովագրություն: Ճանապարհի մյուս հատվածի ապահովագրության համար պատասխանատու է գնորդը, եթե ցանկանում է
- **DAP** - Delivered at Place (առաքվել է նշանակման վայր)
  - Վաճառողը պատասխանատու է փոխադրման կազմակերպման և ապրանքի առաքման համար, մինչև նշված վայրում տրանսպորտային միջոցից բեռնաթափումը
  - Ռիսկերը վաճառողից փոխանցվում են գնորդին, երբ ապրանքները պատրաստ են բեռնաթափման: Այսինքն գնորդն է կրում բեռնաթափման հետ կապված ռիսկերը: Գնորդն է պատասխանատու ներմուծման մաքսազերծման և ներքին հարկերի ու մաքսավճարների վճարման համար
- **DPU** - Delivered at Place Unloaded (առաքվել է նշանակման վայր բեռնաթափված)
  - Վաճառողը պատասխանատու է փոխադրման կազմակերպման, ապրանքի առաքման համար, նշանակված վայրում տրանսպորտային միջոցից բեռնաթափման համար
  - Ռիսկը վաճառողից փոխանցվում է գնորդին, ապրանքը բեռնաթափելուց հետո: Գնորդը պատասխանատու է ներմուծման մաքսազերծման և ներքին հարկերի ու մաքսատուրքերի վճարման համար
- **DDP** - Delivered Duty Paid (Տեղ հասցրած, մաքսը վճարած)
  - Վաճառողը նշանավայրում Գնորդին տրամադրում է ներմուծման համար մաքսազերծած (այդ թվում բոլոր հարկերը և տուրքերը վճարված) և տրանսպորտային միջոցից չբեռնաթափված ապրանքը
  - Ռիսկը վաճառողից փոխանցվում է գնորդին, երբ ապրանքը նրա համար դառնում է հասանելի, սակայն տրանսպորտային միջոցից չբեռնաթափված վիճակում: Այս կանոնը ամենամեծ պատասխանատվությունն է դնում գնորդի վրա, քանի որ վերջինս է պատասխանատու մաքսազերծման և բոլոր հարկերի վճարման համար:

Incoterms® 2020

- **FAS** - Free Alongside Ship (Մինչև նավի մոտ)
  - Վաճառողը ավարտել է իր պարտավորությունը ապրանքը նշված նավահանգստի նավամատույցում նավակողի երկայնքով դնելու պահից՝ կատարելով արտահանման համար անհրաժեշտ բոլոր վճարումները:
  - Այդ պահից սկսած ապրանքի կորստի ու փչացման ռիսկերի հետ կապված բոլոր ծախսերը իր վրա է վերցնում Գնորդը: Գնորդը պատասխանատու է նավի վրա բարձելու և դրանից հետո առաջացող բոլոր ծախսերի համար
- **FOB** - Free on Board (Մինչև նավի վրա)
  - Վաճառողը առաքում է ապրանքը, բարձում նավի վրա նշված նավահանգստում և կատարում արտահանման վճարումները
  - Այդ պահից սկսած Գնորդն իր վրա է վերցնում ապրանքի կորստի ու փչացման ռիսկերը և բոլոր ծախսերը
- **CFR** - Cost and Freight (Արժեքը և փոխադրումը)
  - Վաճառողը առաքել է ապրանքը, բարձել նավի վրա, կատարել արտահանման հետ կապված վճարները և վճարել է մինչև նշանակման վայրի նավահանգիստ փոխադրման ծախսերը
  - Ռիսկը վաճառողից փոխանցվում է գնորդին, երբ ապրանքը բարձվել է նավի վրա: Վաճառողը պատասխանատու չէ նաև ապրանքի հիմնական փոխադրման ապահովագրության համար:
- **CIF -** Cost, Insurance and Freight (Արժեքը, ապահովագրումն ու փոխադրումը)
  - Վաճառողը առաքել է ապրանքը, բարձել նավի վրա, կատարել արտահանման հետ կապված վճարները և վճարել է մինչև նշանակման վ այրի նավահանգիստ փոխադրման ծախսերը
  - Ռիսկը վաճառողից փոխանցվում է գնորդին, երբ ապրանքը բարձվում է նավի վրա
  - Վաճառողը կազմակերպում և վճարում է ապահովագրությունը: Պետք է նկատի ունենալ, որ վաճառողը կազմակերպում է միայն մինիմալ ծածկույթով ապահովագրություն: Եթե գնորդը ցանկանում է ունենալ ավել ապահովագրություն, կամ դրա մասին պետք է հստակ պայմանավորվի վաճառողի հետ կամ կատարի իր հաշվին:

E-COMMERCE

Էլ. առևտուր

- Գործում են նույն պահանջները, ինչ սովորական արտահանման դեպքում
- Փոքր ծավալով արտահանելու դեպքում, գործում են de minimis կանոնները
  - Մինչև 150 Եվրո, որոնք հարկվում են ԱԱՀ-ով
  - 22 եվրոյից ցածր ապրանքներն ազատվում են ԱԱՀ-ից
- ԱԱՀ-ի հարկման երկու տեսակ
  - Ներմուծման մեկ պատուհան
  - Հատուկ մոտեցումներ
- Ցածրարժեք ապրանքների ներմուծման ուղեցույց՝ https://ec.europa.eu/taxation_customs/system/files/2021-06/guidance_on_import_and_export_of_low_value_consignments_en.pdf
- Էլ. առևտրի շրջանակներում ԱԱՀ կանոնների բացատրական նշումներ՝ https://ec.europa.eu/taxation_customs/system/files/2020-09/vatecommerceexplanatory_notes_30092020.pdf
- Աշխարհում գործող de minimis կանոններ՝ https://global-express.org/assets/files/GEA%20De%20Minimis%20Country%20information_4%20November%202021.pdf

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՅՈՒՆ

Արտահանման ապահովագրական գործակալություն

- Հնարավորություն է տալիս խուսափել գնորդի չվճարման դեպքերից
- 82 երկիր
- Մատուցվող ծառայությունները
  - Օտարերկրյա գնորդին մատակարարված ապրանքների դիմաց ստացվելիք գումարների կարճաժամկետ ապահովագրություն
    - Առևտրային ռիսկերից
    - Քաղաքական ռիսկերից
    - Ապահովագրության ժամկետ՝ մինչև 2 տարի
    - Ապահովագրության վկայականի միջոցով առավել բարենպաստ պայմանների շրջանառու ֆինանսական պրոդուկտների ստացում բանկերից
  - Նախաարտահանման ֆինանսավորման ապահովագրություն
    - Բանկային կարճաժամկետ ֆինանսավորման ծառայություններ արտահանման պայմանագրի կատարման նպատակով (366 օր)
  - Գնորդների տվյալներ տարբեր երկրներում
  - Արտահանման պայմանագրի խորհուրդներ